Գ Ա Վ Ա Ռ Ի Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հրավիրում ենք բուհերի դասախոսներին, ասպիրանտներին, գիտահետազոտական գործունեությամբ զբաղվող անձանց՝ մասնակցելու Գավառի պետական համալսարանի ամենամյա՝ 28-րդ գիտաժողովին:

Գիտաժողովը կկայանա **2025 թվականի մայիսի 3-ին և 4-ին (**մեկնարկը՝ ժամը 11.00-ին), զուգակցված՝ առցանց-առկա ձևաչափով:

Մասնակցության համար անհրաժեշտ է մինչև **2025 թվականի ապրիլի 25-ը** լրացնել էլեկտրոնային հայտ՝ հետևյալ հղումով.

https://gsu.am/hy/electroniapplication/

Խնդրում ենք զեկուցումները ներկայացնել էլեկտրոնային տարբերակով **մինչև 2025 թվականի ապրիլի 25-ը**՝ ուղարկելով ԳՊՀ էլեկտրոնային փոստի հետևյալ հասցեներին՝ **info@gsu.am, infogsu@mail.ru**

Գիտաժողովի աշխատանքային լեզուներն են հայերենը, ռուսերենը և անգլերենը:

Գիտաժողովն անցկացվելու է՝ ըստ գիտության հետևյալ բնագավառների. ֆիզիկամաթեմատիկական, քիմիական, կենսաբանական, տեխնիկական, էկոլոգիական, գյուղատնտեսական, պատմական, տնտեսական, փիլիսոփայական, բանասիրական, իրավաբանական, մանկավարժական, հոգեբանական, քաղաքական գիտություններ, սոցիոլոգիա, աշխարհագրություն, երկրաբանություն և երկրաբնապահպանություն:

Զեկուցումներին ներկայացվող պահանջներն են.

1. Գիտական զեկուցումը պետք է լինի 5-ից 10 էջի սահմաններում՝ հայերեն, ռուսերեն կամ անգլերեն, համակարգչային շարվածքով, B 5 չափի տպագրական թղթի վրա, **«GHEA Grapalat»** տառատեսակով, 1,12 միջտողային հեռավորությամբ, թղթի բոլոր կողմերից 18 մմ լուսանցքով, էջադրումը՝ էջի ներքևում (footer), կողմնորոշումը՝ կենտրոն, սահմանները՝ 1սմ:

2. Վերևում նշել վերնագիրը՝ 10,5 pt տառաչափով (մեծատառերով, **թավ՝ Bold**), վերնագրից մեկ տող ներքև՝ աջ անկյունում 10,5 pt տառաչափով, նշել հոդվածի համընդհանուր տասնորդական դասակարգման կոդը (ՀՏԴ, UDC, УДК, տե՛ս http://www.udcsummary.info/php/index.php?tag=1&lang=hy հղումը), այնուհետև հեղինակ(ներ)ի **ազգանունը, անունը (թավ)**, գիտական աստիճանը և կոչումը (սկսել մեծատառով, նոր տողից), զբաղեցրած պաշտոնը (սկսել նոր տողից), մեկ տող ներքև տրվում է հեղինակի էլեկտրոնային փոստի հասցեն, մեկ տող բաց թողնելով՝ 10,5 pt տառաչափով, շեղատառ (italic) և **թավ** բնագրի լեզվով ներկայացվում է զեկուցման ամփոփագիրը (аннотация, abstract), որտեղ պետք է հակիրճ ներկայացվեն ուսումնասիրության առարկան, մեթոդները, հեղինակ(ներ)ի հիմնական եզրահանգումները, գիտական նորույթ պարունակող առաջարկությունները:

3. Մեկ տող բաց թողնելով՝ անհրաժեշտ է գրել «**Բանալի բառեր**» **(թավ)** և նշել 5-6 բանալի բառեր:

4. Բաց թողնելով երկու տող՝ անհրաժեշտ է շարադրել աշխատանքը, 10,5 pt տառաչափով: Մեջբերումները կատարել համակարգչային հղման ձևով՝ զեկուցման համար հերթական համարակալմամբ (1-ից մինչև վերջին հղումը):

5. Բնագրին հաջորդում է «**Օգտագործված աղբյուրների ցանկ**»-ը:

6. Բնագրի վերջին էջում հեղինակը գրում է՝ «**Բնագրի նյութը նախկինում չի հրատարակվել**», որին հաջորդում են հեղինակի ստորագրությունը (բոլոր համահեղինակների ստորագրությունները) և ԳՊՀ գիտական պարբերականի խմբագրական խորհրդին ներկայացման օրը, ամիսը, տարին:

7. Ներկայացվող զեկուցումները պետք է ունենան հստակ տրամաբանական կառուցվածք՝

ա) **ներածություն**, որում հիմնավորվում է ուսումնասիրման առարկայի արդիականությունը, ներկայացվում են հետազոտության հիմնական նպատակը, տեսական և գործնական հիմքերը, առաջադրվող վարկածը,

բ) **հիմնական մաս,** որում վերլուծվում են հետազոտության թեմայով նախկինում կատարված գիտական հրապարակումները, արդի մոտեցումները, հեղինակ(ներ)ի կատարած ուսումնասիրությունը, տեսակետները,

գ) **ամփոփիչ մաս**, որը բովանդակում է հետազոտության արդյունքները՝ եզրահանգումները, տեսական և գործնական նշանակություն ունեցող առաջարկությունները, գիտական նորույթ պարունակող խնդրի լուծումը, հաստատված վարկածը, կանխատեսումները:

8. Զեկուցման վերջում 10,5 pt տառաչափով անհրաժեշտ է գրել հոդվածի շարադրանքի լեզվից տարբեր վերը նշված երկու լեզուներով՝ հոդվածի վերնագիրը, հեղինակ(ներ)ի ազգանունը, անունը, գիտական աստիճանը և կոչումը, զբաղեցրած պաշտոնը, հեղինակ(ներ)ի էլեկտրոնային փոստի հասցեն, ամփոփագիրը՝ 150-250 բառ, և **բանալի բառերը**:

9. Լատիներեն և հունարեն տառերը, սիմվոլները, ինչպես նաև բանաձևերն անհրաժեշտ է հավաքել «Microsoft Equation Editor 3.0» ծրագրով, նկարների բացատրությունները և աղյուսակները ներկայացնել նկարի տեսքով՝ 10,5 pt տառաչափով:

10. Անհրաժեշտ է ներկայացնել կարծիք՝ ներկայացվող գիտական զեկուցման մասին կամ համապատասխան ամբիոնի կամ գիտական կազմակերպության երաշխավորությունը:

ԳՊՀ գիտաժողովի ծրագրում կներառվեն պահանջներին համապատասխանող զեկուցումները:

Գիտաժողովի նյութերը կհրապարակվեն ԳՊՀ գիտական պարբերականի հերթական համարում՝ էլեկտրոնային տարբերակով:

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել հետևյալ հեռախոսահամարներով՝ +374-60-46-03-02, -60-46-04-03 կամ գրել ԳՊՀ էլեկտրոնային փոստին (**info@gsu.am, infogsu@mail.ru):**

Շնորհակալություն համագործակցության համար:

ԳՊՀ գիտաժողովի կազմկոմիտե

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 28-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՁԵՎԱՉԱՓ

Ազգանուն, անուն, հայրանուն,	
Գիտական աստիճան	
Գիտական կոչում	
Աշխատանքի վայրը	
Պաշտոնը	
Զեկուցման վերնագիրը	
Մասնագիտական բաժանմունքը, որտեղ նախատեսվում է մասնակցությունը	
Էլեկտրոնային փոստի հասցեն	
Հեռախոսահամարը	